

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Արբասալի Բարասալիի Էբրահիմի

**ՀԻՆ ԹԱԲԱՐԻԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ըստ Ղուրանի հին թարգմտված թարգմանված ձևաչափի)**

**Ժ.02.06 «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարգարիտ Լևոնի Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վարդան Ստեփանի Ոսկանյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. ապրիլի 22-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ
Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի
15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մարտի 21-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

բանասիրական գիտությունների
թեկնածու Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Թեմայի արդիականությունը

Նոր արևմտախրանական լեզուների և բարբառների շարքում թաբարին, որը ներկայում առավել հայտնի է մազանդարաներեն անվանումով, դեռևս իսլամական միջնադարից ավանդված սեփական գրային ավանդույթի բավական վաղ բնույթի տեսանկյունից, դասական նոր պարսկերենից հետո, փաստորեն, երկրորդ արևմտախրանական լեզուն է:

Ժամանակագրորեն այն կարելի է բաժանել երկու շրջանի՝ դասական կամ հին թաբարի, և արդեն մեր օրերում վերջինիս անմիջական շարունակողը հանդիսացող արդի մազանդարաներենի բարբառները, որոնցից ներկայիս Իրանի Մազանդարան նահանգում Սարի կենտրոնական քաղաքի բարբառի հիման վրա էլ ստեղծվել է այս կամ այն չափով ստանդարտացված ժամանակակից մազանդարաներեն գրական լեզուն:

Թաբարիով ստեղծված գրականության նմուշների հայտնաբերման և ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ դա կարող է նոր լույս սփռել ներկայիս մազանդարաներենի և ընդհանրապես մերձկասպյան տարածաշրջանի արևմտախրանական լեզուների պատմության բազմաթիվ խնդիրների վրա, քանի որ վերջիններս, ենթարկվելով Իրանի պետական լեզու հանդիսացող պարսկերենի զգալի և հարածուն ազդեցությանը, այժմ արդեն կորցրել են իրենց բնիկ ձևերի մի որոշակի մասը:

Իրանագիտության ոլորտում հին թաբարիին նվիրված աշխատանքները խիստ սակավաթիվ են՝ գրված հիմնականում աղբատիկ լեզվական նյութեր արտացոլող ընդհանուր ակնարկների տեսքով, որոնցում բնականաբար հաշվի չեն առնված արդի լեզվաբանության նորագույն ձեռքբերումներն ու մեթոդաբանությունը: Բացի այդ՝ մինչև օրս չի ներկայացվել մասնավորապես հին թաբարիի հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկություններն արտացոլող որևէ լիակատար հետազոտություն: Չնայած ընդհանուր իրանագիտական բնույթի աշխատություններում մասնակիորեն ներգրավվել են նաև հին թաբարիի առանձին բառեր, այսուհանդերձ վերջինիս հատկապես բառապաշարային նյութը գրեթե չի ենթարկվել նաև պատմահամեմատական ուսումնասիրության:

Հին թաբարիի ձեռագիր հուշարձանների հետազոտությունը, ներկայանալով որպես իրանական բարբառագիտության կարևոր ուղղություններից մեկը, արդիական է թե՛ իրանական լեզվաբանության և թե՛, մասնավորապես, հյուսիսարևմտյան ու մերձկասպյան իրանական բարբառների պատմահամեմատական քննության առումով:

Այս տեսանկյունից Ղուրանի հին թաբարիով թարգմանված ձեռագրերից մեկի լեզվական նյութի իրանագիտական ուսումնասիրությունների ասպարեզ ներմուծումը պետք է օժանդակի լուծելու նաև ցեղակից մերձկասպյան լեզուների և բարբառների մինչև այժմ չմեկնաբանված որոշ գիտական կարևորություն

ներկայացնող հիմնահարցեր, որոնք իրենց հերթին կարող են հանգեցնել Կասպից ծովի հարավի ողջ իրանական բարբառային գանգվածի ընդհանուր հատկանիշների վերանայմանը:

2. Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Ներկա ատենախոսության նպատակն է Իրանի Իսլամական Հանրապետության Իսլամական Խորհրդի Մեջլիսի գրադարանում պահպանվող հին թաբարիով թարգմանված մահմեդականության Սուրբ գրքի՝ Դուրանի, մի ձեռագրի և խնդրին առնչվող առկա գիտական գրականության հիման վրա իրականացնել հին թաբարիի հնարավորին համապարփակ ուսումնասիրությունը: Այս նպատակին հասնելու համար աշխատանքում զուգահեռաբար օգտագործվել են նկարագրական, պատմահամեմատական, ինչպես նաև համաժամանակյա տիպաբանական համեմատության լեզվաբանական մեթոդները: Նշված մեթոդների զուգահեռ կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսությունը նպատակ է հետապնդում հին թաբարի լեզուն դիտարկել թե՛ համաժամանակյա և թե՛ տարածամանակյա լեզվաբանական վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև բացահայտել ցեղակից լեզուների և բարբառների հետ վերջինիս ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները: Տիպաբանական համեմատության մեթոդը հիմնականում ներգրավվել է՝ հատկապես այլ իրանական լեզուների հետ զուգահեռների համատեքստում: Նշված նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

Նշված ձեռագրի հիման վրա որքան հնարավոր է ամբողջական վերծանել, ներկայացնել և մեկնաբանել լեզվական նյութը:

Առկա նյութերը դասակարգել, մշակել և ենթարկել քերականական հնարավորին լիակատար վերլուծության:

Վերհանել հին թաբարիի բնիկ քերականական ձևերն ու բառապաշարը, անհրաժեշտության դեպքում համեմատել դրանք ժամանակակից մագանդարաներենի բարբառների և հարևան իրանական լեզուների նյութերի հետ և ներկայացնել հին թաբարիի որոշ լեզվական փոխառնչակցություններ:

Պատմահամեմատական լեզվաբանության մեջ ընդունված մեթոդաբանական հիմքի վրա պատմական–ստուգաբանական քննության ենթարկել հին թաբարիի բաղաձայնական համակարգը:

Հնարավորության դեպքում ճշգրտել ընդհանրապես մերձկասպյան իրանական լեզուներին և մասնավորապես հին թաբարիին ներհատուկ պատմական հնչյունական զարգացումները:

3. Աշխատանքի գիտական նորույթը

Հատուկ հին թաբարիի լեզվին նվիրված գիտական ուսումնասիրություն մինչ այժմ չի կատարվել, իսկ ատենախոսության թեմային առնչվող հետազոտությունների հիմնական մասը վերաբերում է դեռևս իրանական

բարբառագիտության ձևավորման ու կայացման վաղ ժամանակաշրջանին: Այս առումով դրանք արդեն իսկ հիմնականում ամբողջովին կամ մասնակիորեն հնացած են և պետք է օգտագործվեն որոշակի զգուշությամբ և քննադատական մոտեցմամբ:

Աշխատանքում ներգրավվել է Ղուրանի՝ առայժմ անտիպ հին թաբարիով թարգմանված ձեռագրերից մեկից դուրս բերված հնարավորին ընդգրկուն և ցարդ իրանագիտությանն անհայտ լեզվական նյութ:

Այն փաստորեն հին թաբարի լեզվի հնչյունաբանության և ձևաբանության համաժամանակյա ներկայացման առաջին ամբողջական փորձն է, որի ընթացքում նաև առաջին անգամ այս լեզվի բաղաձայնական համակարգը, ինչպես նաև առանձին քերականական ձևեր արժանացել են նաև ստուգաբանական քննության:

Աշխատանքի շարադրանքի ընթացքում, հաշվի առնելով իրանական լեզվաբանության նորագույն ձեռքբերումները, կատարվել են նաև իրանական բարբառագիտությանն առնչվող եզրաբանական և ժամանակագրական բնույթի ճշգրտումներ և նորամուծություններ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է թաբարիի ժամանակագրական բաժանման խնդրին:

4. Աշխատանքի գործնական նշանակությունը

Ներկա ատենախոսության շրջանակներում առաջ քաշված և մշակված դրույթները կարող են նպաստել իրանական բարբառագիտության մի շարք առանցքային հարցերի լուսաբանմանը, դրանց որոշ չլուծված կամ վիճելի համարվող հարցերի նորովի մեկնաբանմանը՝ հին թաբարիի և մյուս իրանական լեզուների, նաև, առանձին վերցրած, այս լեզվի և ժամանակակից մագանդարաներենի բարբառների հարաբերակցության տեսանկյունից:

Պատմահամեմատական լեզվաբանության օգնությամբ ձեռք բերված բոլորովին նոր արդյունքները, տվյալներն ու վերլուծությունները կարող են նաև անգնահատելի նյութ հանդիսանալ, տվյալ լեզվի կրողը հանդիսացող հանրույթի վաղնջական պատմության մութ էջերին լույս սփռելու նպատակ հետապնդող պատմաբանի համար:

Պատմահամեմատական լեզվաբանության մեթոդաբանության ճշգրիտ կիրառմամբ ձեռք բերված եզրահանգումները կարող են զգալի նյութ տրամադրել նաև մերձկասպյան իրանական լեզուների զարգացման պատմությամբ և ցեղակից լեզուների հետ դրանց ունեցած պատմական կամ արեալային շփումների խնդրով զբաղվող լեզվաբան-մասնագետների համար:

Աշխատանքում ներկայացված հին թաբարիի քերականական վերլուծության արդյունքում վերհանված զգալի թվով մինչ այժմ անհայտ տվյալները կարող են օգտակար լինել նաև ժամանակակից մագանդարաներենի տիպաբանական կամ համեմատական քերականությունների կազմման ժամանակ:

Բացի այս, աշխատանքում ներկայացված հին թափարիի բառապաշարային նյութը և զանազան ստուգաբանությունները կարող են օգտակար լինել իրանական տարբեր բարբառների, ինչպես նաև համեմատական բնույթ ունեցող համաիրանական ստուգաբանական բառարանների կազմման ընթացքում:

5. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեջ միմյանց զուգահեռ կիրառվել են նկարագրական պատմահամեմատական լեզվաբանության մեթոդների ընձեռած բոլոր արդի հնարավորությունները: Նշված մեթոդաբանության զուգահեռաբար կիրառումը հիմնականում պայմանավորված է ատենախոսության շարադրման ընթացքում դրված այն հիմնական նպատակներից մեկով, ըստ որի հին թափարի լեզուն անհրաժեշտ էր ուսումնասիրել թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա վերլուծության տեսանկյուններից՝ վերջին դեպքում հնարավորին բացահայտելով ցեղակից մերձկասպյան և ընդհանրապես իրանական լեզուների ու բարբառների հետ վերջինիս դրսևորած ընդհանրություններն ու տարբերությունները:

6. Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է իրանական լեզուների, այդ թվում նաև թափարիի զարգացման բոլոր փուլերը՝ սկսած հին իրանական լեզվական ընդհանրության դարաշրջանից մինչև միջին և նոր իրանական լեզուներ ու բարբառներ: Թափարիի լեզվական նյութն իր մեջ ներառնում է 15-16-րդ դարերից ընդհուպ մինչև մեր օրերը գրի առնված որոշ նմուշներ, ինչպես նաև ժամանակակից մազանդարաներենի տվյալները, որոնք անհրաժեշտության դեպքում համեմատվում են Ղուրանի նշված ձեռագրային թարգմանության մեջ վկայված բառամթերքի և քերականական ձևերի հետ:

7. Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են «Իրան–նամե», “Orientalia” և “American Journal of Scientific Research”, «Ахбори Академияи Илмҳои Чумхурии Тоҷикистон» գիտական հանդեսներում ու ժողովածուներում հեղինակի լույս ընծայած հայերեն, անգլերեն և տաջիկերեն հոդվածներում, ինչպես նաև Մազանդարանի Ազատ Համալսարանում և ԵՊՀ Իրանագիտության ամբիոնում 2008–20012թթ. անցկացված սեմինարների ընթացքում հեղինակի կողմից կարդացված զեկուցումներում:

Աշխատանքն ամբողջությամբ քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում: Դրանում արծարծված առանձին հիմնախնդիրներ քննարկվել են նաև իրանցի և արտերկրյա մասնագետների ու համապատասխան ոլորտների գիտնականների հետ:

8. Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, աշխատանքի հիմնական մասը հանդիսացող երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների ցուցակից և օգտագործված գրականության ցանկից: Ներածությունը և բոլոր գլուխները բաժանված են թվագրված համապատասխան ենթաբաժինների:

9. Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և պարսկերեն տարաբնույթ աշխատություններ, որոնք ոչ միայն առնչվում են հին թաբարի լեզվին, այլև, ընդհանրապես, իրանական լեզուների հյուսիսարևմտյան կասպյան ենթախմբի մաս կազմող մի շարք լեզուների և բարբառների:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ընդհանուր գծերով քննարկվում են Ղուրանի հին թաբարիով թարգմանված ձեռագրի առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ ատենախոսության մեջ ներկայացվել և քննության առարկա են դարձել Իրանի Իսլամական Հանրապետության Իսլամական Խորհրդի Մեջլիսի գրադարանում համապատասխանաբար 12278 և 4028 համարների պահպանվող հին թաբարիով թարգմանված երկհատորանոց ձեռագիր Ղուրանի տեքստում վկայված լեզվական տվյալները: Բերվում են պատմական տեղեկություններ ձեռագրի հեղինակի և ձեռագրային յուրահատկությունների վերաբերյալ, ներկայացվում են ընդհանուր նկատառումներ հավաքված լեզվական նյութի, կիրառված տառադարձության սկզբունքների, քննության ձևի և շրջանակների մասին:

Ուսումնասիրության առարկա ձեռագրի 28 x 20սմ և 27,5 x 19սմ չափի կաշեկազմ երկու հատորներն էլ վերնագրված են պարսկերեն՝ *تفسیر قرآن با ترجمه طبری* [Tafsir-e Qor'ān bā tarjome-ye Tabari] – «Ղուրանի մեկնություն թաբարիով թարգմանությամբ» և հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը՝ համապատասխանաբար 318 և 375 էջերով՝ գրված երկու «նասիւ-ե թահրիրի» և «նասթալիդ» ձեռագրատեսակներով: Յուրաքանչյուր էջ պարունակում է ավելի խոշոր ձեռագրով գրված Ղուրանի համապատասխան այսօրի կամ այսօրների տեքստ, որի շուրջը ավելի մանր ձեռագրով ներկայացված են արաբերենով կատարված մեկնությունները: Այսօրների տողերի արանքում և լուսանցքներում ավելացված են հին թաբարիով և հաճախ նաև պարսկերենով թարգմանված մի շարք արաբերեն բառեր և արտահայտություններ:

Ձեռագրային հատկանիշների հիման վրա կարելի է ենթադրել, որ հին թաբարիով և պարսկերենով հատվածական թարգմանություններն ավելացվել են համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ ըստ երևույթին կրոնական ձեմարաններում

արաբերենին չտիրապետող թաբարիախոս տեղացի աշակերտների համար ուսուցողական նպատակներով:

Ըստ ամենայնի, թե՛ ուսուցիչը և թե՛ աշակերտները արաբերեն տեքստը առավելագույնս ընկալելի դարձնելու նպատակով դասավանդման ընթացքում օգտագործել են ոչ թե ժամանակի կրոնական դպրոցներում լայն տարածում ունեցած գրական պարսկերենը, այլ տեղի խոսակցական լեզուն, ինչի շնորհիվ էլ հենց իրականացվել է Ղուրանի և սրա մեկնության տեքստի մասնակի թարգմանությունը հին թաբարիով:

Ներածության մեջ առանձին ենթագլխով արծարծվում է նաև հին թաբարիի պատմական տարածման և գրային ավանդույթի հիմնահարցը, քննարկվում են այս լեզվի և ցեղակից իրանական լեզուների քերականության համեմատական ընդհանուր ուրվագծերը, համառոտ ակնարկով ներկայացվում հին թաբարիի որոշ ձևաբանական հատկանիշները՝ որոշ տարածամանակյա կտրվածքով:

Հին թաբարիի մասին ցանկացած նյութ պարունակող առկա բազմալեզու գրականության մանրամասն տեսության միջոցով մատուցվում է վերջինիս ուսումնասիրության պատմությունը, առանձին-առանձին անդրադարձ է կատարվում զանազան հեղինակների աշխատություններին:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում համաժամանակյա վերլուծության տեսանկյունից ներկայացվում է հին թաբարի լեզվի հնչյունական համակարգը: Հին թաբարիի ձայնավորական համակարգը պետք է որ որոշակիորեն տարբերվեր նոր պարսկերենից և ավելի մոտ լիներ ժամանակակից մազանդարաներենին: Եթե ի նկատի առնենք այս հանգամանքը, ապա բոլոր ձայնավորները շեշտակիր դիրքում հնչել են ավելի երկար, մինչդեռ, անշեշտ վանկում կարող էին ծայր աստիճան կրճատվել: Հին թաբարիի ձայնավորները կարելի է ներկայացնել են հետևյալ աղյուսակի տեսքով.

առաջնային	միջին	ետին
փակ i		u
փակ-միջին		o
բաց-միջին	e	ā
բաց	a	

Ինչպես ժամանակակից մազանդարաներենում, այնպես էլ հին թաբարիում երկհնչյուններն ընդհանրապես հանդիպում են շատ հազվադեպ՝ այսպես կոչված, պարսկականացված խոսքում միայն: Պարսկերենից փոխառյալ բառերում [ou] երկհնչյունը դառնում է [u], իսկ [ey] երկհնչյունն արտահայտվում է [i] կամ [e] տարբերակներով, նույն կերպ է եղել հավանաբար նաև հին թաբարիում, օր. دوری [duri] «ափսե» < պրս. douri, طور [tur] «ձև, եղանակ» < պրս. tour, میدون [midun] «հրապարակ» < պրս. meydān, غیرت [yiret] «կիրք, ձգտում» < պրս. yeyrat և այլն:

Հին թաբարիի բաղաձայնական համակարգը գրեթե նույնական է ժամանակակից մազանդարաներենի և նոր պարսկերենի հետ: Դրանում կարելի է տարբերակել 24 բաղաձայն, որոնք հետևյալներն են՝ ب [b], پ [p], ف [f], گ [g], ک [k], خ [x], ه [h], غ [γ], ق [q], د [d], ت [t], ج [j], چ [č], ز [z], س [s], ش [š], ژ [ž], م [m], ن [n], ر [r], ل [l], و [v], ی [y]:

Միայն արաբերենից և մասնակիորեն թյուրքերենից փոխառյալ բառերում հանդիպող կոկորդային խուլ ق [q] բաղաձայնը, դատելով արդի մազանդարաներենի նյութից պետք է որ բոլոր դիրքերում ունեցած լինի ավելի ձայնեղ արտասանություն, օր. قاسم [yasam] «երդում», قسمت [yemat] «մաս, ճակատագիր» և այլն: Բացի այս՝ նույն ժամանակակից մազանդարաներենի նյութից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ گ [g] և ک [k] բաղաձայնները պարսկերենի համապատասխան հնչյունների համեմատությամբ արտասանվել են ավելի ետնային դիրքում և կարճ ձայնավորներից առաջ, ի տարբերություն պարսկերենի, չեն քմայնացել:

Լնդային ر [r] բաղաձայնը խուլ է կամ մասամբ ձայնեղ, թրթռուն նրբերանգով, ձայնավորից առաջ հավանաբար ունեցել է թույլ արտահայտված շնչեղություն, օր. رگ [rag] «երակ», رنڭ [rang] «երանգ, գույն»:

Կոկորդային դադարի բնույթ կրող արաբական ع (‘) բաղաձայնը հանդիպում է միայն արաբերենից փոխառյալ բառերում, այն էլ լոկ «ուսյալ գրչության» տարբեր պարունակող տեղիներում, իսկ սովորաբար այն ուղղակի կորչում է, հավանաբար առանց ազդելու հաջորդող և նախորդող ձայնավորների վրա, օր. عادت [ādat] < արբ.–պրս. ādat «սովորույթ»:

Դատելով ժամանակակից մազանդարաներենի նյութից՝ ռնգային ن [n] հնչույթը բացի ռնգային–ատամնային տարբերակից իր մեջ ներառել է նաև ետնաքմային ڭ [ŋ] որը հայտնվել է միայն g–ից հետո, օր. وڭ vāng [væ:ŋ] «ձայն»: Շրթնայիններից առաջ պատմական n բաղաձայնը սովորաբար առնմանության հետևանքով փոխվում է م [m]–ի, հմմտ. ديمبال [dembāl] և այլն: Երբեմն նկատելի է -nn- > -nd-, տարանմանության հետևանքով, օր. فن [fann] < պրս. fand «հնարք»:

Նեղվածքային ž բաղաձայնը բացի d–ից առաջ և պարսկական փոխառություններում հին թաբարիում ընդհանրապես չի հանդիպում՝ վկայված լինելով միայն هژداه [hižda] «տասնութ», ازدها [eždehā] «վիշապ» և گژدم [gaždem] «կարիճ» բառերում:

ԳԼՈՒԽ 2. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում մանրամասն համաժամանակյա քննության առարկա է դառնում հին թաբարիի ձևաբանությունը:

Հին թաբարիում գոյականը տարբերակում է առման (որոշյալ – անորոշ) , հոլովի (ուղիղ – թեք), ինչպես և թվի (եզակի–հոգնակի) կարգեր: Նոր արևմտաիրանական լեզուների մի մասին հատուկ քերականական սեռի (արական–իգական) տարբերակման համակարգը խնդրո առարկա լեզվում ամբողջովին վերացել է: Նախադասության մեջ գոյականի կապը և հարաբերությունները քերականական այլ անդամների հետ արտահայտվում են՝ 1) էտադրություններով; 2) շարադասությամբ: Այսպես կոչված պարսկական իգաֆետային կառույցը, երբ հատկացուցիչն ու հատկացյալը և որոշիչն ու որոշյալը միմյանց են միանում հատուկ ցուցիչով, ունի կամ ամբողջությամբ փոխառյալ բնույթ, կամ էլ ձևավորվել է որպես երկրորդական երևույթ՝ պարսկերենի անմիջական ազդեցությամբ:

Հին թաբարիում որպես անորոշ հոդ կամ որպես անորոշ միակության ցուցիչ կիրառվում է Ե [-i] ձևությոթ, որը հանգում է միջին իրանական *ēv(ak)* «մեկ» թվականին, օր. *گوكى* [guki] «մի կով, ինչ–որ մի կով», *مردى* [mardi] «մի մարդ, ինչ–որ մի մարդ»: Ձայնավորով վերջացող գոյականներից հետո անորոշ հոդը կամ անորոշ միակության ցուցիչը նշվում է «համգե» (ε) ձայնանիշով և հավանաբար պետք է ընթերցվի [-yi], օր. *خيا* [xoyāyi] «մի աստված, ինչ–որ մի աստված», *گ* [gāyi] «մի ժամանակ, ինչ–որ մի ժամանակ», *دورى* [doruyi] «մի սուտ, ինչ–որ մի սուտ» և այլն:

Հին թաբարիին բնորոշ է մի կառույց, երբ ցուցական դերանունով օժտված և *ke* [ke] շաղկապից առաջ դրված անորոշ միակության ցուցիչը գոյականին հաղորդում է որոշյալ առման իմաստ, օր. *اون خيا كه* [un xoyāyi ke] «Այն Աստված, որ», *اون كالاجى كه* [un kalāji ke] «այն ագռավը, որ» և այլն:

Գոյականի որոշյալ առումը հատուկ | [-ā] էտադրության միջոցով ձևավորվում է միայն այն դեպքում, երբ այդ գոյականը հանդես է գալիս բացառապես ուղիղ կամ հանգման անուղղակի խնդրի դերում, օր. *بخون اين قرآنا* [bexun in Qor’ānā] «կարդա այս Ղուրանը», *شما دوحها بوينين* [šemā dujahā bevinin] «դուք դժոխքը տեսե՞ք» և այլն: Ձայնավորով վերջացող գոյականներից հետ անվան որոշակիացման նպատակով նույն էտադրության մեջ վերականգնվում է պատմական բաղաձայնը և այն ունի |, [-rā], գրաֆիկական պատկերը, օր. *وى خيا* [verā vi xoyārā vāpušā] «քո Աստծուն ինայիր», *ورا بوينى در كفارة وناهو* [verā bevinī dar kaffāre-ye venāhun] «նրան տեսնես մեղքերի թողության մեջ» և այլն:

Ինչպես արդեն նշվեց, հին թաբարին տարբերակում է երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Հոգնակին կազմվում է օ- [-un] կամ հ- [-hā] մշտապես շեշտակիր հոգնակիակերտ վերջավորություններով:

ա) օ- [-un] հոգնակիակերտը, որպես կանոն գործածվում է շնչավոր գոյականների հետ, օր. *مرغ* [mory] «թռչուն» - *مرغون* [moryun] «թռչուններ», *زن* [zen]

«կին» - زنون [zenun] «կանայք», آدمى [ādami] «աղամորդի» - آدميون [ādami(y)un] «աղամորդիներ», بیغمبر [piyambar] «մարգարե» - بیغمبرون [piyambarun] «մարգարեներ» և այլն:

բ) ها- [-hā] հոգնակիակերտը, որպես կանոն գործածվում է անչունչ գոյականների հետ և հանդիպում է թե՛ անջատ և թե՛ միացյալ գրությամբ, օր. ديم [dim] «դեմք» - ها ديم [dimhā] «դեմքեր», جومى [jumi] «հագուստ» - جوميها [jumihā] «հագուստներ», خال [xāl] «ճյուղ» - خالها [xālhā] «ճյուղեր», گردش [gardešgā] «զբոսավայր» - گردش گاه [gardešgāhā] «զբոսավայրեր» և այլն: Միայն երկու դեպքում վկայված է այս հոգնակիակերտի ھا- [-ihā] տարբերակը, որը հավանաբար ավելի արխաիկ գրության հետևանք է, օր. ستون [sotun] «սյուն» - ستونيه [sotunihā] «սյուններ» և ترازو [tarāzu] «կշեռք» - ترازويه [tarāzuihā] «կշեռքներ»: Խիստ հազվադեպ պարագաներում այս վերջավորությամբ կարող են հոգնակի կազմել նաև շնչավոր գոյականները, օր. جمده [jomande] «միջատ» - هاجمده [jomandehā] «միջատներ» և այլն:

Հին թաբարիում գոյականն ունի երկու հոլովական ձև՝ ուղիղ և թեք: Ուղիղ հոլովը որևէ հատուկ վերջավորությամբ չի առանձնանում, այլ իրենից ներկայացնում է բառի չթեքված ձևը:

Գոյականների թեք հոլովը կազմվում է անշեշտ ى- [-e] ցուցիչի միջոցով, օր. ուղիղ հոլով دوحه [dujah] – թեք հոլով دوحه [dujaha] «դժոխք», ուղիղ հոլով صبح [sobh] – թեք հոլով صبحی [sobhe] «առավոտ», ուղիղ հոլով نماج [namā] – թեք հոլով نماجی [namāje] «աղոթք», ուղիղ հոլով خياوند [xoyāvand] – թեք հոլով خياوندی [xoyāvande] «Աստված» և այլն:

Գոյականին տրական, հայցական, բացառական և ներգոյական հոլովների իմաստներ հաղորդելու համար օգտագործվում են ڍ [(r)ā], جا [jā], در [dar] ետադրությունները, որոնք չնայած փաստացիորեն կազմում են անկախ հոլովական ձևեր, սակայն, քանի որ վերջիններս հստակորեն հանդես են գալիս որպես անկախ խոսքի մասեր, ապա վերջնականապես ձևավորված տրական, հայցական, բացառական և ներգոյական հոլովների մասին խոսելն անհնարին է:

Հին թաբարիում ածականը պատմական զարգացման ընթացքում կորցրել է քերականական սեռի (արական–իգական), հոլովի (ուղիղ–թեք) և թվի (եզակի–հոգնակի) կարգերը՝ այս տեսանկյունից փաստորեն ոչնչով չտարբերվելով ժամանակակից մազանդարաներենից և պարսկերենից:

Ժամանակակից մազանդարաներենի նման և ի հակադրություն պարսկերենի հին թաբարիում որոշիչ–որոշյալ կապն արտահայտելու համար որոշային կառույցներում ածականը նախորդում է գոյականին՝ ստանալով անշեշտ ۵- [-e] վերջավորությունը, օր. خجيره سخن [xojire soxan] «լավ խոսք», اصحابون [xāsse ashābun] «ընտրյալ տերեր», خشکه گل [xoške gel] «չոր ցեխ» և այլն: Շատ հաճախ [-e] վերջավորությունը որևէ գրաֆիկական արտահայտություն չի ստանում, օր. باريک ديو [bārike divā] «նուրբ դիպակ», شوم فال [šume fāl] «չարագուշակ բախտ», سوز واش [savze vāš] «կանաչ խոտ»: Եթե ածականը վերջանում է ձայնավորով, ապա [-e] վերջավորությունը որպես կանոն սղվում է,

օր. ٽاجه خون [tāje xun] «թարմ արյուն», اسپي مرواري [espi morvāri] «սպիտակ մարգարիտ», هاجي واجي سخن ها [hāji vāji soxan] «սնիմաստ խոսք» և այլն:

Հին թաբարիում որակական ածականը համեմատության աստիճանները կազմում է համադրական եղանակով, վերջիններս, սակայն նախադասության մյուս անդամների հետ հարաբերվում են հիմնականում վերլուծական միջոցներով: Խնդրո առարկա տեքստում համեմատության աստիճաններով դրված ածականները հանդիպում են չափազանց հազվադեպ: Ածականի համեմատական աստիճանը կազմելու համար կիրառվում է -تر [-tar] վերջածանցը, օր. وهتر [vehtar] «ավելի լավ», سجاوارتر [sejāvārtar] «ավելի սազական», وزگتر [vezergtar] «ավելի մեծ», خجیرتر [xojirtar] «ավելի գեղեցիկ, ավելի լավ» և այլն:

Հին թաբարիում թվականները բաժանվում են երկու խմբի՝ քանակական և դասական: Ի տարբերություն մերձկասպյան լեզվամիության անդամ այնպիսի լեզուների, ինչպիսիք են մասնավորապես թալիշերենը, հարզանին և զազայերենը հին թաբարիում վկայված քանակական թվականները գրեթե համընկնում են պարսկերենի հետ: Բարդ քանակական թվականներ քննության առարկա տեքստում չեն հանդիպում: Ղուրանի հին թաբարիով թարգմանության մեջ վկայված են հետևյալ թվականները یک [yek] «մեկ», دو [do] «երկու», سه [se] «երեք», چهار [čahār] «չորս», ده [dah] «տաս», یازده [yānzdah] «տասմեկ», دوازده [davānzdah] «տասներկու», هیزده [hiždah] «տասնութ», نوزده [navizdah] «տասնինը», وپست [vist] «քսան», سی [say] «հարյուր», هزار [hazār] «հազար»:

Քանակական թվականը մշտապես ունի նախադաս կիրառություն: Ըստ որում, ի կենտրոնական Իրանի բարբառների նման հին թաբարիում, ի տարբերություն պարսկերենի և ժամանակակից մազանդարաներենի թվականին հաջորդող գոյականը կարող է գործածվել ոչ միայն եզակի, այլ նաև հոգնակի թվով, օր. هزار ماله [hazār māl] «հազար ամիս», هر دو بوز [har do buz] «երկու կրովն էլ», բայց նաև مردومون دو [do mardumun] «երկու մարդիկ»՝ հանդիպում է արաբերեն راجلین [raǰulayn] «երկու մարդ» երկակի թարգմանության ժամանակ և այլն: Վկայված դասական թվականների կազմությունը նույնպես գործնականում նույնական են ժամանակակից մազանդարաներենի և պարսկերենի հետ և ինչպես վերջինում հին թաբարիում ևս կազմվում են քանակական թվականներին ավելացնելով -مین [-omin] շեշտակիր վերջածանցը, օր. چهارمین [čahāromin] «չորրորդ», وپستمين [vistomin] «քսաներորդ», صميمين [sayomin] «հարյուրերորդ»: Բացառություն է կազմում دوم [dovom] «երկրորդ» թվականը, որը կազմվում է م- [-om] վերջածանցի օգնությամբ: Կոտորակային թվականներից վկայված է միայն سيك [seyek] «մեկ երրորդ» ձևը وى سيك [vi seyek] «նրա մեկ երրորդը» արաբերեն ثلاث [θalθahu] «նրա մեկ երրորդը» արտահայտության դիմաց:

Հին թաբարիում կարելի է գանազանել դերանունների հետևյալ տիպերը՝ անձնական, ցուցական, անդրադարձ, հարցական, որոշյալ և անորոշ: Առկա են երկու հիմնական անձնական դերանվանական ձևեր՝ ուղիղ և ստացական: Ուղիղ ձևերը հանգում են միջին իրանական դերանունների հովվական թեք ձևերին,

որոնք իրենց հերթին սերում են հին իրանական դերանվան սեռական-տրականից: Մյուս իրանական հին հոլովները՝ բացառականը, գործիականը, տրականը և հայցականը, հին թաբարիում կորել են: Ստացական հոլովով դրված դերանունները վերջանում են **Շ-** [-e]-ով (ձայնավորներից հետո այն իր գրաֆիկական արտացոլումն է ստանում (՞) «համզե» նշանով) և հանդիսանում են երկրորդական կազմության արդյունք: Դրանք, փաստորեն, -e ձևույթ ստացած ուղիղ հոլովի անձնական դերանուններն են: Սրա հետևանքով էլ շեշտը պետք է, որ միշտ ընկներ արմատական մասի վրա, օր.՝ **اِما** [emā] «մենք» + -e → **ءِما** [e māe] «մեր, մեզ»; **شِما** [šemā] «դուք» + -e → **ئِشِما** [šé me] կամ **ءِشِما** [šé māe] «ձեր, ձեզ» և այլն: Նորաբանության արդյունք հանդիսացող, երկրորդական ծագում ունեցող և աստիճանաբար ձևավորվող դերանվանական հոլովման ողջ համակարգը հին թաբարիում փաստորեն հիմնված է դերանունների այս երկու հիմնական ձևերի և -(r)ā, ետադրությամբ կազմված տրական-հայցական հոլովի դերանունների գործածության վրա: Հաշվի առնելով այս ամենը՝ հին թաբարիի համար կարելի է առաջարկել եռահոլով կամ ավելի ճիշտ եռաստիճան անձնական դերանվանական համակարգ:

Հին թաբարիի ցուցական դերանուններն, ի տարբերություն ժամանակակից մազանդարաներենի, ունեն միայն պարզ ձևեր: Դրանք երկաստիճան են, այսինքն՝ ցույց են տալիս մոտ և հեռու առարկաներ ու անձեր: Ցուցական դերանունները դրսևորում են միայն թվային (եզակի – հոգնակի) հակադրություն:

Բոլոր դեմքերի համար վկայված են **خوی** [xoy], **خوشتن** [xoštan], **خویش** [xiš], **خویشتن** [xištan] «իր, ինքը» անդրադարձ դերանվան ձևերը: Վեջին երկու ձևերը ամենայն հավանականությամբ փոխառյալ են պարսկերենից: Սովորաբար այս դերանվանը նախորդում է գոյականի կամ անձնական դերանվան ուղիղ ձևը, որոնք էլ որոշակիացնում են դիմային պատկանելությունը: Որպես հարաբերական դերանուն օգտագործվում է **ڪ** [ke] «որ, որը» ձևը:

Հին թաբարիում հիմնականում լայն տարածում ունի ետադրությունների բավական զարգացած համակարգը: Ի տարբերություն ժամանակակից մազանդարաներենի, որտեղ նախդիրները խիստ հազվադեպ են և որպես կանոն հանդիպում են միայն պարսկերենից փոխառյալ կառույցներում, հին թաբարիում դրանք նույնպես ունեն բավական տարածված կիրառություն:

Ետադրությունները որպես կանոն դրվում են գոյականից կամ դերանունից հետո: Մեծամասամբ դրանցից առաջ դրվող բառը օգտագործվում է թեք հոլովով: Բացառություն են կազմում միայն **ا**, [(r)ā], **جا** [jā], **دار** [dar] ետադրությունները, որոնցից առաջ գոյականը դրվում է ուղիղ հոլովով: Հիշյալ **ا**, [(r)ā] ետադրությունը կարող է նաև դիտարկվել համապատասխան գոյականի կամ դերանվան անքակտելի ձևույթ, սակայն համաժամանակյա մակարդակում դեռևս հստակ է նաև դրա ձևական անկախ ետադրային բնույթը:

Հին թաբարիում նախադրությունները կիրառվում են ետադրություններին զուգահեռ: Շատ հաճախ վերևում նշված որոշ ետադրություններ

գործածվում են նաև որպես նախադրություն, ինչը հավանաբար արդյունք է պարսկերենի և հատկապես, այսպես կոչված, «ուսյալ խոսքի» ազդեցության:

Հին թաբարիի բայական համակարգն, ինչպես մյուս իրանական լեզուների և բարբառների պարագայում, հիմնված է երկու՝ ներկայի և անցյալի, հիմքերի և չորս սահմանական, հրամայական, ըղձական և ստորադասական եղանակային խմբերի վրա: Խոնարհման մեջ առկա են եզակի և հոգնակի թվեր, ինչպես նաև երեք դեմքեր: Զանազան ժամանակաեղանակային ձևերի կազմության մեջ կարևոր դեր են խաղում նաև բայական նախածանցները: Ըստ կազմության կան պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր: Սահմանական եղանակն ունի երեք ժամանակաձև՝ ներկա, անցյալ կատարյալ, անցյալ անկատար և վաղակատար անցյալ: Ստորադասական և հրամայական եղանակները ներկայանում են միայն ներկայի ժամանակային ձևերով: Ըղձական եղանակն ունի ներկայի և անցյալի ժամանակաձևեր: Ապառնիի համար հատուկ ժամանակաձև գոյություն չունի և ապառնիի իմաստն արտահայտվում է սահմանականի ներկայի միջոցով: Սահմանականի, հրամայականի, ստորադասականի և ըղձականի ներկան կազմվում է բայի ներկայի հիմքից: Անցյալ անկատարն ու կատարյալը, վաղակատար անցյալը և ըղձականի անցյալը ձևավորվում են անցյալի հիմքի հիման վրա: Կասպիական լեզվամիության անդամ հին գորգաներենի, գիլաներենի և հարավային թալիշական բարբառների նման հին թաբարին նույնպես պատմական զարգացման ընթացքում ամբողջովին կորցրել է հյուսիսարևմտյան իրանական լեզուների և բարբառների զգալի մասին բնորոշ ստորոցյալի խնդրային համաձայնեցումը կամ, այսպես կոչված, էրգատիվ կառույցը, որն, ամենայն հավանականությամբ, արդյունք է մերձկասպյան տարածքներում պատմականորեն առկա պարսկերենի նկատելի ազդեցության:

Բայի ներկայի հիմքերը պատմականորեն հանգում են հին իրանական համապատասխան ձևերին, որոնք, ինչպես հայտնի է, կազմության տեսակետից դրսևորում էին բազմազանություն լինելով՝ 1) արմատական, 2) կրկնավոր, 3) ածանցավոր: Ներկայի հիմքերի ձևավորման գործում կարևոր դերակատարություն ունեին նաև ձայնդարձը, ինչպես նաև առաջինների թեմատիկ կամ աթեմատիկ լինելու հանգամանքը: Հին բայական նախածանցները պատմական զարգացման ընթացքում ամբողջովին սերտաճել են արմատի հետ և ներկա փուլում այլևս չեն գիտակցվում որպես այդպիսիք: Ամենամեծ խումբը կազմում են այն բայահիմքերը, որոնք հանգում են հ. իր. *-a վերջածանցով ձևերին, որոնց շարունակությունները արդեն համաժամանակյա մակարդակում ոչ հաճախ է հաջողվում պատմականորեն հստակ զանազանել մաքուր արմատական ձևերից սերող ներկայի հիմքերից, ուստի մեթոդաբանորեն դրանք ճիշտ կլինի դիտարկել միատեղ՝ խմբավորելով միայն արմատական ձայնդարձի հիման վրա.

1) գրոյական ձայնդարձով. հին թաբարի koš- «սպանել» (هاکشم [hākošim] «սպանում ենք») < հ. իր. *kuša- (√*kuš-), հմմտ.՝ ալ. kaoš-, մ. պրու. kuš-, դաս. պրու. kuš-; հին թաբարի kub- «խփել, ծեծել, թակել» (بکوبين [bekubin])

«թակեք» < հ. իր. *kup-: kaup-, հմմտ.՝ սվ. kaop-, մ. պրու. kōv-, դաս. պրու. kōb-; հին թաբարի hel- «թողնել» (واهلن [vāhelan] «թողնում են») < հ. իր. *hrz-, հմմտ.՝ սվ. harəz- (ներկայի հիմք հərəza-, hərəzya-, hərəzaya-), մ. պրու. hirz-, դաս. պրու. hil-, հ. հու. sřjati «թողնում է»;

2) միջին (guṇa) ձայնդարձով. հին թաբարի gard- «պտտվել, ման գալ» (دگردد [dagarde] «պտտվում է») < հ. իր. *warta- (√*wart-), հմմտ.՝ սվ. varəta-, պրթ. wart-, մ. պրու. wart-, դաս. պրու. gard-; հին թաբարի kan- «քանդել, փոքել» (بكن [bekan] «քանդիր») < հ. իր. *kana- (√*kan-), հմմտ.՝ սվ. kana-, պրթ. kan-, մ. պրու. kan-, դաս. պրու. kan-; հին թաբարի kaf- «ընկնել, գցել» (دكفه [dakafe] «գցում է») < հ. իր. *kapa- (√*kap-), հմմտ.՝ պրթ. kap-, մ. պրու. kaf-, դաս. պրու. kaf-; հին թաբարի ra- «գնալ, շարժվել» (بوره [bure] «գնա») < հ. իր. *rawa- (√*raw-), հմմտ.՝ պրթ. raw-, դաս. պրու. rav- «գնալ»; հին թաբարի kaš- «քաշել» (هاکاشتم [hākašim] «քաշում ենք») < հ. իր. *karša- (√*křš-), հմմտ.՝ սվ. karəša- պրթ. kaš-, մ. պրու. kaš-, դաս. պրու. kaš-; հին թաբարի lis- «լիզել» (دليسة [dalise] «լիզում է») < հ. իր. *raiz- (√*riz-), հմմտ.՝ սվ. raēz-, դաս. պրու. lēs-; հին թաբարի šūr- «վիանալ» (بشور [bešur] «վա») < հ. իր. *xšauda- (√*xšud-), հմմտ.՝ դաս. պրու. šōy. ժամ. պրսկ. šūr-; հին թաբարի jov- «ծամել» (واجويه [vajove] «ծամում է») < հ. իր. *jyava- (√*jyav-), հմմտ.՝ դաս. պրու. jav-;

3) վերին (vrddhi) ձայնդարձով. հին թաբարի gārd- «վերադարձնել» (دگاردنيم [dagārdanim] «վերադարձնում ենք») < հ. իր. *wārta- (√*wart-), հմմտ.՝ սվ. vārəta-, պրթ. wārt-, մ. պրու. wārt-, դաս. պրու. gard-; հին թաբարի māl- «քսել, տրորել» (بمال [bemāl] «քսիր») < հ. իր. *mārz- (√*mřz-), հմմտ.՝ սվ. marəz- «ավել, քսել», պրթ. marz-, մ. պրու. mard-, դաս. պրու. māl- և այլն:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱԲՆՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում ներկայացվում են հին իրանական – հին թաբարի (համապատասխանաբար՝ Ղուրանի հին թաբարիով թարգմանության լեզու) բաղաձայնական համակարգերի պատմական հնչյունական համապատասխանությունները: Հյուսիսարևմտյան իրանական բարբառների մեծ մասի նման հին թաբարիի հնչյունական համակարգը հիմնականում բաղաձայնների ղոռոտում է, որ բավական արժանահավատ և կարևոր պատմական զարգացումներ է հանդես բերում: Տվյալ դեպքում ձայնավորները, որպես կանոն, ենթարկվում են այն հիմնական օրինաչափություններին, որոնք հատուկ են գրեթե ողջ արևմտաիրանական բարբառային զանգվածին՝ սկսած ծայր հյուսիսարևմուտքում տարածված հյուսիսքրդական բարբառներից մինչև Խորասանի և Կենտրոնական Ասիայի պարսկական խոսվածքները՝ իհարկե, յուրաքանչյուր բարբառին կամ լեզվին բնորոշ ներքին առանձնահատկություններով և բնականոն զարգացումներով հանդերձ:

Հետևաբար, ցանկացած հյուսիսարևմտյան իրանական լեզվի կամ բարբառի պատմական զարգացման տեսանկյունից, բաղաձայնական համա-

կարգը պետք է հանդիսանա վերլուծության այն հիմնական ելակետը, որի հիման վրա էլ հնարավոր կլինի որոշարկել տվյալ բարբառի դիրքը ցեղակից բարբառների և ընդհանրապես արևմտախրանական լեզուների շարքում: Բաղաձայնական համակարգի տարածամանակյա պատմահամեմատական մանրակրկիտ ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ հին թաբարին հստակորեն պահպանում է հյուսիսարևմտյան իրանական լեզուներին բնորոշ բաղաձայնական հիմնական զարգացումները, որոնցից ամենակարևորներից կարելի է նշել այնպիսիք, ինչպիսիք են հ. իր. *w- > v-ի բառասկզբի դիրքում պահպանումը, օր. հին թաբարի vāng «ձայն» (հմմտ. պրս. bāng) և հյուսիսարևմտյան նորաբանության հետևանքով հ. իր. *fr- բաղաձայնական խմբի զարգացումը h(r)-ի հին թաբարի հս- բայական նախածանց «ներքև» (հմմտ. պրս. foru-), բայց նաև հին թաբարի [foruxta bekardin] «վաճառեցիք» (հմմտ. պրս. foruxte) և այլն:

Չաշվի առնելով բաղաձայնական համակարգում առկա պատմական զարգացումների առանձնահատկությունները, հին թաբարին պետք է դասել հյուսիսարևմտյան իրանական լեզուների խմբին, որում ներկայում մեռած գորգաներենի, ինչպես նաև ժամանակակից մագանդարաներենի, գիլաներենի, թալիշերենի, նոր ազարիական բարբառների, սեմանյան բարբառախմբի և գուրանիի ու զազայերենի հետ այն կազմում է հյուսիսարևմտյան իրանական լեզուների, այսպես կոչված, Կասպիական լեզվամիությունը:

Այսուհանդերձ, չնայած հյուսիսարևմտյան իրանական լեզու հանդիսացող հին թաբարիի կասպիական ծագումնաբանական առնչակցություններին, այն ի ցույց է դնում նաև հարավարևմտյան իրանական բարբառներին բնորոշ որոշակի հնչյունական զարգացումներ: Ասվածն ամենից առաջ վերաբերում է *-rd- > -l- անցմանը, օր. հին թաբարի del «սիրտ» (հմմտ. պրս. del), ինչպես նաև մի շարք այլ՝ զուտ հարավարևմտյան հնչյունական զարգացումների, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են, որ քննարկվող լեզուն, ինչպես նաև հարակից մերձկասպյան լեզուները պատմականորեն ձևավորվել են՝ անցնելով հարավարևմտյան իրանական բարբառների հետ սերտ շփումների երկարատև փուլով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ատենախոսության մեջ առաջ քաշված հարցերն ամփոփելով և հիմնական եզրակացություններն ի մի բերելով՝ կարելի է նշել, որ.

1. Թաբարի լեզվի և դրանով ստեղծված գրականության ուսումնասիրությունը, հանդիսանալով իրանական պատմական բարբառագիտության կարևորագույն խնդիրներից, խիստ արդիական է թե՛ ընդհանրապես իրանական լեզվաբանության և թե՛ մասնավորապես հյուսիսարևմտյան և մերձկասպյան իրանական բարբառների համեմատական քննության տեսանկյուններից:

2. Հին թաբարիով թարգմանված քննության առարկա Ղուրանի ձեռագրի հեղինակը, դատելով դրա լուսանցքներում պահպանված հատվածական բնույթ կրող տեղեկատվությունից Աբուլֆազլ իբն Շահրդավիր իբն Բահա աղ-Դին Յուսեֆ Դեյլամին է: Դատելով մեկնությունների առանձնահատկություններից՝ հեղինակին պետք է համարել տվյալ ժամանակաշրջանում Թաբարիստանում և Դեյլամանում բավական լայն տարածում ունեցած զեյդիական կրոնական դպրոցի ներկայացուցիչ:

3. Ձեռագրային հատկանիշների հիման վրա կարելի է ենթադրել, որ այս Ղուրանի հին թաբարիով և պարսկերենով հատվածական թարգմանություններն ավելացվել են համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ ըստ երևույթին կրոնական ճեմարաններում արաբերենին չտիրապետող թաբարիախոս տեղացի աշակերտների համար ուսուցողական նպատակներով: Ըստ ամենայնի, թե՛ ուսուցիչը և թե՛ աշակերտները արաբերեն տեքստը առավելագույնս ընկալելի դարձնելու նպատակով դասավանդման ընթացքում օգտագործել են ոչ թե ժամանակի կրոնական դպրոցներում լայն տարածում ունեցած գրական պարսկերենը, այլ տեղի խոսակցական լեզուն, ինչի շնորհիվ էլ հենց իրականացվել է Ղուրանի և սրա մեկնության տեքստի մասնակի թարգմանությունը հին թաբարիով:

4. Հին թաբարիով կատարված Ղուրանի տեքստի թարգմանության լեզուն որոշակի տարբերություններ ունի հին թաբարիի շարունակողը հանդիսացող ժամանակակից մազանդարաներենից և աչքի է ընկնում իր զգալի արխաիզմով: Այս տեսանկյունից այն բավական մոտ է «Մաղամաթ ալ-Հարիրի» երկի հին թաբարիով թարգմանության լեզվին:

5. Մեփական գրական ավանդույթի ժամանակագրության տեսանկյունից գրեթե չզիջելով նոր պարսկերենին՝ հին թաբարի լեզուն պահպանել է հնչյունական, քերականական, շարահյուսական և բառապաշարային իր հիմնական բնիկ հատկանիշները՝ այսուհանդերձ չկարողանալով խուսափել իսլամական միջնադարում մշակութային և քաղաքական լրջագույն դերակատարություն ունեցած դասական նոր պարսկերենի զգալի ազդեցությունից:

6. Հին թաբարիում գոյականը տարբերակում է առման (որոշյալ – անորոշ), հոլովի (ուղիղ – թեք), ինչպես և թվի (եզակի–հոգնակի) կարգեր: Նոր արևմտաիրանական լեզուների մի մասին հատուկ քերականական սեռի (արական–իգական) տարբերակման համակարգը խնդրո առարկա լեզվում ամբողջովին վերացել է: Որոշիչը և հատկացուցիչը, բացառությամբ պարսկերենից ուղղակի փոխառված կայուն բառակապակցությունների, նախադաս է, իսկ որոշիչ – որոշյալ և հատկացուցիչ – հատկացյալ կապն արտահայտվում է ոչ թե, այսպես կոչված, «իգաֆետային ցուցիչով», այլ նաև մյուս հյուսիսարևմտյան իրանական լեզուներին բնորոշ թեք հոլովի օգնությամբ:

7. Հին թաբարին նոր իրանական լեզուների մեծամասնության նման ուղիղ հոլովի ձևում տարբերակում է երկու թիվ՝ եզակի և հոգնակի, սակայն, ի

տարբերություն պարսկերենի, պահպանում է նաև ուղիղ և թեք հոլովների հստակ հակադրությունը, որով և մերձենում է հարևան մերձկասպյան ցեղակից մյուս լեզուներին և բարբառներին: Գոյականների թեք հոլովը կազմվում է անշեշտ -e ցուցիչի միջոցով:

8. Հին թաբարիում որակական ածականը համեմատության աստիճանները կազմում է համադրական եղանակով, վերջիններս, սակայն նախադասության մյուս անդամների հետ հարաբերվում են հիմնականում վերլուծական միջոցներով: Խնդրո առարկա տեքստում համեմատության աստիճաններով դրված ածականները հանդիպում են չափազանց հազվադեպ: Ածականի համեմատական աստիճանը կազմելու համար կիրառվում է -tar վերջածանցը, իսկ գերադրական աստիճանը կազմվում է -tarin վերջածանցով՝ հավանաբար պայմանավորված պարսկերենի ազդեցությամբ: Բացի այս, գերադրական աստիճանի իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական միջոցներով:

9. Հին թաբարիում թվականները բաժանվում են երկու խմբի՝ քանակական և դասական: Ի տարբերություն կասպիական լեզվամիության անդամ այնպիսի լեզուների, ինչպիսիք են մասնավորապես թալիշերենը, հարզանին և զազայերենը հին թաբարիում վկայված քանակական թվականները գրեթե համընկնում են պարսկերենի հետ: Բարդ քանակական թվականներ Ղուրանի քննության առարկա թարգմանության տեքստում չեն հանդիպում:

10. Նորաբանության արդյունք հանդիսացող, երկրորդական ծագում ունեցող և աստիճանաբար ձևավորվող դերանվանական հոլովման ողջ համակարգը հին թաբարիում փաստորեն հիմնված է դերանունների երկու՝ ուղիղ և ստացական հիմնական ձևերի և -(r)ā, ետադրությամբ կազմված տրական-հայցական հոլովի դերանունների գործածության վրա: Հաշվի առնելով այս ամենը՝ հին թաբարիի համար կարելի է առաջարկել եռահոլով կամ ավելի ճիշտ եռաստիճան անձնական դերանվանական համակարգ: Ժամանակակից մազանդարաներենի նման և ի տարբերություն պարսկերենի՝ հին թաբարիում ամբողջովին բացակայում են կցական կամ էնկլիտիկ դերանունները:

11. Հին թաբարի ձևաբանության մեջ կարևոր դերակատարություն ունի լայն տարածում ունեցող ետադրությունների բավական զարգացած համակարգը: Ի տարբերություն ժամանակակից մազանդարաներենի, որտեղ նախդիրները խիստ հազվադեպ են և որպես կանոն հանդիպում են միայն պարսկերենից փոխառյալ կառույցներում, հին թաբարիում դրանք նույնպես ունեն բավական տարածված կիրառություն:

12. Հին թաբարիին աչքի է ընկնում բավական զարգացած և հարուստ բայական համակարգով: Այն, ինչպես մյուս իրանական լեզուների և բարբառների պարագայում, հիմնված է երկու՝ ներկայի և անցյալի, հիմքերի և երեք՝ սահմանական, հրամայական և ստորադասական եղանակային խմբերի վրա: Խոնարհման մեջ առկա են եզակի և հոգնակի թիվ, ինչպես նաև երեք դեմքեր: Չանազան ժամանակա-եղանակային ձևերի կազմության մեջ կարևոր դեր են

խաղում նաև բայական նախածանցները: Ըստ կազմության կան պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր: Սահմանական եղանակն ունի երեք ժամանակաձև՝ ներկա, անցյալ կատարյալ, անցյալ անկատար և վաղակատար անցյալ: Ստորադասական և հրամայական եղանակները ներկայանում են միայն ներկայի ժամանակային ձևերով: Ըղձական եղանակն ունի ներկայի և անցյալի ժամանակաձևեր: Ապառնիի համար հատուկ ժամանակաձև գոյություն չունի և ապառնիի իմաստն արտահայտվում է սահմանականի ներկայի միջոցով: Սահմանականի, հրամայականի, ստորադասականի և ըղձականի ներկան կազմվում է բայի ներկայի հիմքից: Անցյալ անկատարն ու կատարյալը, վաղակատար անցյալը և ըղձականի անցյալը ձևավորվում են անցյալի հիմքի հիման վրա:

13. Կասպիական լեզվամիության անդամ հին գորգաներենի, գիլաներենի և հարավային թալիշական բարբառների նման հին թաբարին նույնպես պատմական զարգացման ընթացքում ամբողջովին կորցրել է հյուսիսարևմտյան իրանական լեզուների և բարբառների զգալի մասին բնորոշ ստորոգյալի խնդրային համաձայնեցումը կամ, այսպես կոչված, էրգատիվ կառույցը, որն, ամենայն հավանականությամբ, արդյունք է մերձկասպյան տարածքներում պատմականորեն գրեթե մշտապես առկա պարսկերենի նկատելի ազդեցության:

14. Ղուրանի հին թաբարիով կատարված թարգմանության լեզվական նյութի հիման վրա կատարված հին թաբարիի բաղաձայնական համակարգի տարածամանակյա պատմահամեմատական մանրակրկիտ ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ հին թաբարին հստակորեն պահպանում է հյուսիսարևմտյան իրանական լեզուներին բնորոշ բաղաձայնական հիմնական զարգացումները, որոնցից ամենակարևորներից կարելի է նշել այնպիսիք, ինչպիսիք են՝ հ. իր. *w- > v-ի բառասկզբի դիրքում պահպանումը, օր. հին թաբարի vāng «ձայն» (հմմտ. պրս. bāng) և հյուսիսարևմտյան պատմական նորաբանության հետևանքով հ. իր. *fr- բաղաձայնական խմբի զարգացումը h(r)-ի հին թաբարի հս- բայական նախածանց «ներքև» (հմմտ. պրս. foru-), բայց նաև հին թաբարի [foruxta bekardin] «վաճառեցիք» (հմմտ. պրս. foruxte) և այլն:

15. Հաշվի առնելով բաղաձայնական համակարգում առկա պատմական զարգացումների առանձնահատկությունները, հին թաբարին պետք է դասել հյուսիսարևմտյան իրանական լեզուների խմբին, որում ներկայում մեռած գորգաներենի, ինչպես նաև ժամանակակից մագանդարաներենի, գիլաներենի, թալիշերենի, նոր ազարիական բարբառների, սեմնանյան բարբառախմբի և գուրանիի ու զագայերենի հետ այն կազմում է հյուսիսարևմտյան իրանական լեզուների, այսպես կոչված, կասպիական լեզվամիությունը:

16. Չնայած հյուսիսարևմտյան իրանական լեզու հանդիսացող հին թաբարիի կասպիական ծագումնաբանական առնչակցություններին այն ի ցույց է դնում նաև հարավարևմտյան իրանական բարբառներին բնորոշ որոշակի հնչյունական զարգացումներ: Ասվածն ամենից առաջ վերաբերում է *-rd- > -l-

անցմանը, որ՝ հին թաբարի del «սիրտ» (հմմտ.՝ պրս. del), ինչպես նաև մի շարք այլ՝ զուտ հարավարևմտյան հնչյունական զարգացումների, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են, որ քննարկվող լեզուն, ինչպես նաև հարակից մերձկասպյան լեզուները պատմականորեն ձևավորվել են՝ անցնելով հարավարևմտյան իրանական բարբառների հետ սերտ շփումների երկարատև փուլով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Էրրահիմի, Ա.Ա. Թաբարիով ավանդված Ղուրանի մի քանի լեզվական առանձնահատկությունների շուրջ, «Orinetalia», հ. 10, էջ 54-56, Երևան, 2010:

2. Էրրահիմի, Ա.Ա. Հին թաբարիի բայական նախածանցները (ըստ Ղուրանի հին թաբարիով թարգմանված ձեռագրի), «Orinetalia», հ. 11, էջ 75-83, Երևան, 2010:

3. Էրրահիմի, Ա.Ա. Հին թաբարիի բաղաձայնական որոշ զարգացումների շուրջ (ըստ Ղուրանի հին թաբարիով թարգմանված ձեռագրի), «Իրան-նամե», թիվ 42-43, էջ 112-113, Երևան, 2010-2011:

4. Иброхими, А. Таркобойи изофи ва васфи дар забони табарии кадим, «Ахбори Академияи Илмхойи Чумхурии Тоҷикистон: Шӯъбаи илмҳои ҷамъиятшиноси», №4, сс. 136-138, Душанба, 2010.

5. Ebrahimi, A. The Characteristics of the Old Tabari Dialect (In Quran Translation in Old Tabari), “American Journal of Scientific Research”, Issue 34 (2011), pp. 157-166.

Аббасали Бабаалиевич Ебрахими

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДРЕВНЕГО ТАБАРИ (на основе перевода Корана на древний табари)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 22 апреля 2013г.. в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, действующего в Институте языка имени Гр.

Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Данная диссертация, которая основывается на языковом материале одного из рукописей перевода Корана на древний язык табари, хранящейся под номерами 12278 и 4028 в Библиотеке Меджлиса Исламской Республики Иран, посвящена синхронному и диахроническому изучению древнего табари, который является

предком современного мазандаранского языка и входит в группу прикаспийских диалектов северо-западных иранских языков.

Несмотря на то, что еще с конца 19-го века некоторые фрагментарные материалы древнего языка табари в той или иной степени были включены в работы разных исследователей, посвященные мазандаранскому языку, этот язык, по сути, до сих пор не был объектом всестороннего научного представления и анализа, хотя и с точки зрения хронологи соевой письменной фиксации фактически не уступает новоперсидскому языку.

Во **«Введении»**, определяется объект рамки и форма исследования, приводятся данные общего характера о неизданной рукописи Корана и его комментариев, в котором представлен также частичный перевод текста священной книги ислама на древний табари, даются сведения об авторе рукописи делается анализ причин по которой она была переведена. В кратких очерках рассматриваются история письменной традиции языка табари и его некоторые морфологические особенности в сравнении с современным мазандаранским и другими родственными прикаспийскими языками. Дается подробный критический анализ научной литературы по тематике.

Первая глава – **«Фонетика»** посвящена составу вокализма и консонантизма языка табари в синхронном плане. Проведенный анализ показывает, что состав гласных указанного языка в целом должен был совпадать с вокализмом родственных прикаспийским новоиранских диалектов особенно с современным мазандаранским, однако в нем заметны некоторые архаизмы, которые хронологически отличают его как от новоперсидского, так и мазандаранского, и приближают к соседнему средневековому языку Горгана. Дифтонги, судя по частичной огласовке, как и в современном мазандаранском языке, звучали как монофтонги.

Консонантизм языка табари фактически не отличается от систем согласных современного мазандаранского и персидского языков. В нем можно проследить наличие 24 согласных: ب [b], پ [p], ف [f], گ [g], ک [k], خ [x], ه [h], غ [γ], ق [q], د [d], ت [t], ج [j], چ [č], ز [z], س [s], ش [š], ژ [ž], م [m], ن [n], ر [r], ل [l], و [v], ی [y]. Горланый арабский согласный ع(‘) встречается лишь в заимствованиях из арабского языка.

Во второй главе – **«Морфология»**, подробно описываются морфологический строй языка табари, в случае необходимости в соответствующих разделах частично освещаются также важные вопросы синтаксиса. В основном, делается акцент на синхронно-описательное представление всего грамматического строя языка, хотя в ряде случаев для внесения большей ясности некоторые явления рассматриваются также с точки зрения историко-диахронического развития. В роли показателя определенности имени существительного выступает постпозитивный артикль ى [-i] в сочетании с اک [ke] «который», неопределенность или единичность передаются посредством того артикля или показателя ى [-i], который восходит к среднеиранскому ēv(ak) «один». Показателями множественного числа имени являются –ān и –aŋ, первая из которых выступает только при наличии

определенного существительного. Сохраняются два падежа – прямой и косвенный. По образования первый десяток числительных является простым, а числительные второго десятка, как в случае с современным мазандранским, исторически образованы из двух морфем. Степени сравнения качественных прилагательных образуются с помощью суффиксов -tag (сравнительная степень) и -tagin (суперлатив). Местоимения различают следующие типы - личные, указательные, возвратные, вопросительные, негативные, определенные и неопределенные. Как в соседних иранских языках прикаспийского региона, в языке табари, в процессе исторического развития вследствие полной утраты именного склонения образовалась довольно развитая система предлогов и особенно послелогов. Язык табари характеризуется развитой глагольной системой. Как в случае с другими иранскими языками и диалектами она тоже основывается на оппозиции основ настоящего и прошедшего времени и имеет четыре наклонения – изъявительное, сослагательное, желательное и императив.

Третья глава - «**Историческая фонетика**», посвящена рассмотрению становления системы консонантизма языка табари диахроническим методом. В ней подробно анализируется историческое развитие всех древнеиранских согласных и консонантных групп, реконструируются древнеиранские формы слов, приводится нужный сравнительный материал из родственных иранских языков и диалектов. Историко-сравнительный анализ консонантизма языка табари показывает, что ему присущи те основные черты, которые характеризуют представителей северо-западной подгруппы иранских языков прикаспийского круга. Однако, несмотря в основном на северо-западный характер, его консонантизму присущи ряд черт, которые более характерны для юго-западных иранских языков и диалектов. Речь в частности идет о переходе *-rd- > -l-, например, табари del «сердце» (ср. новоперсидский del), а также о других типично юго-западных черт, которые еще раз доказывает, что указанный язык, как и все соседние прикаспийские языки и диалекты развивались, пройдя через долгий этап тесных контактов с новоперсидским языком и другими представителями юго-западного лингвистического континуума.

Как заключение диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

Abbasali Babaali Ebrahimi

**THE LINGUISTIC PECULIARITIES OF OLD TABARI LANGUAGE
(based on Old Tabari translation of a manuscript of Quran)**

Thesis for the Ph.D. of Philology, speciality 10.02.06 "Ancient and Modern Languages of Asia"

Defense will be held on April 22, 2013 at 15⁰⁰, at the special session of the Specialized

SUMMARY

The thesis, which is based on the linguistic material of one of the manuscripts of the Quran translation to the Old Tabari language stored under numbers 12278 and 4028 in the Majles Library of the Islamic Republic of Iran, is dedicated to synchronic and diachronic study of Old Tabari, which is the ancestor of the modern Mazandarani language and belongs to the group of Caspian dialects of north-western Iranian languages.

Despite the fact that since the late 19th century, some fragmentary materials of Old Tabari language were included to some extent in the works of a general character in the field of Mazandarani studies, Old Tabari in general and its variety fixed in the given manuscript in particular has not yet been the subject of comprehensive scientific presentation and analysis.

Provides a detailed critical analysis of the scientific literature on the subject.

In the “**Introduction**”, the object, scope and form of the study is determined, A special subchapters are dedicated to the general information on the unpublished manuscript of the Quran and its commentaries, which also represented a partial translation of the holy book of Islam in Old Tabari, information about the author of the manuscript, the analysis of the reasons for which it was translated. In a brief essay the history of the written language tradition of Tabari and some morphological characteristics of its in comparison with the modern Mazandarani and other related Caspian languages is also discussed. A detailed critical analysis of scientific literature on the subject is the object of last subchapter of this part.

The first chapter - “**Phonetics**” is dedicated to the synchronic analysis of vocalism and consonant system of Old Tabari.

The analysis shows that the composition of vowels in Old Tabari language in general was not different from the vocalism of kindred Caspian dialects especially in comparison with modern Mazandarani, but did notice some archaisms that are chronologically distinguish it from both New Persian and Mazandarani, and bring to a nearby medieval language of Gorgan. Diphthongs, as the signs of “harakats” seems to be monphtomgized, as in modern Mazandarani.

The consonant system of Old Tabari actually do not differ from the systems of to modern Mazandarani and Persian languages. It can be seen that there were 24 consonants: ب [b], پ [p], ف [f], گ [g], ک [k], خ [x], ه [h], غ [y], ق [q], د [d], ت [t], ج [j], چ [č], ز [z], س [s], ش [š], ژ [ž], م [m], ن [n], ر [r], ل [l], و [v], ی [y]. Arabic guttural consonant ع(‘) occurs only in borrowings from Arabic.

In the second chapter - “**Morphology**”, the morphology of Old Tabari language became the object of specialized study. If necessary the important issues of syntax is also

discussed in the corresponding chapters. In general, the study is focused on synchronic-descriptive presentation of the whole grammatical system of the Tabari, although for most clarity in special cases, some phenomena are also discussed in terms of historical and diachronic developments. Definite nouns are formed by postpositive article ۛ [-i], which should be followed by ڪ [ke] «which». The marker of indefiniteness is also ۛ [-i], which can be traced back to Middle Iranian  v(ak) «one». Markers of the plural is--un and --h , the first appears only in the case of a animated noun. The first ten numerals are simple, and the second ten numerals, as in the case of New Persian, are historically formed of two morphemes. Degrees of comparison of the qualitative adjectives are marked with the suffix -tar (comparative) and -tar n (superlative). Pronouns have the following types - personal, reflexive, interrogative, negative, definite and indefinite. In the Old Tabari language, as in the neighboring Iranian languages of the Caspian shore, the process of historical evolution resulted to the complete loss of noun declension, which is now replaced by an advanced system of prepositions and especially postpositions.

The Old Tabari is characterized by a highly developed verbal system. As in the case of other Iranian languages and dialects, it is also based on the opposition of the present and past stems and has four moods - indicative, subjunctive, optative and imperative.

The third chapter - "**Historical Phonology**", is dedicated to the analysis of development of the consonant system of Old Tabari, based on diachronic method of study. The historical development of ancient Iranian consonants and consonant clusters in Tabari are studied in detail. Some ancient Iranian forms are reconstructed, the necessary comparative material from the related Iranian languages and dialects is also presented.

Historical and comparative analysis of consonant system of Old Tabari languages shows that it conveys the main features that characterize the representatives of the northwestern Iranian languages of Caspian group. However, although mainly in the north-western character, its consonant system has a number of features that are more common in the south-western Iranian languages and dialects. This in particular is a transition *-rd->-l-, for example, Tabari del "heart" (cf. New Persian del), as well as other typical features of the southwest, which once again proves that the language specified as all the neighboring Caspian languages and dialects have evolved, going through a long phase of close contacts with Persian language and other representatives of the south-western linguistic continuum.

In the final section of the thesis the conclusions and summary of the main results of study is presented.

